

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի

կազմակերպարական վարչության մասնագետ,

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայցորդ

Անի ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական

դատարանի դատավորի օգնական

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԵԴԻԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Միջնորդության ինստիտուտը (mediation)¹ վերականգնողական արդարադատության բոլոր ծրագրերի կողմից կիրառվում է որպես հաշտության ընթացակարգի առաջնային տարր: Այն ծնվել է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի շրջանակներում և սկսել է լայնորեն կիրառվել XX դարի 70-ական թվականներին: Հետագայում վերականգնողական արդարադատությունը սկսեց տարածվել նաև մայրցամաքային իրավունքի համակարգում ու թեև նախկինում ևս որոշ երկրներում այդ ինստիտուտը կիրառվում էր՝ այլ անվանումներով²:

Ներկայումս վերականգնողական արդարադատության այս ծրագիրը գործում է Ավստրալիայում, Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, Լեհաստանում, ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Չեխիայում և այլ երկրներում:

Վերականգնողական արդարադատության կողմնակիցները գտնում են, որ այն միտում ունի հանցագործության դեմ պայքարելու ինչպես միկրո մակարդակի վրա (քանի,

¹ Mediation հասկացությունը տարբեր պետություններում հանդես է գալիս տարբեր անվանումներով և ընթացակարգերով: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայում իրավաբանական տերմինալոգիայում médiation տերմինը կիրառվում է այն դատավարությունների նկատմամբ, որոնց մասնակիցները չափահասներ են, մինչդեռ réparation հասկացությունը տարածվում է միայն անչափահասների քրեական արդարադատության նկատմամբ: Գերմանիայում օգտագործվում է Täter–Opfer–Ausgleich տերմինը, իսկ Ավստրիայում՝ Außergerichtlicher Tatausgleich: Նորվեգացիները իրենց մոդելն անվանել են konflikt and mediation: Մեծ Բրիտանիայում ի սկզբանե mediation և reparation տերմինները համարժեք էին, բացի այդ անսովոր արագ տեմպերով հայտնի դարձավ restorative justice հասկացությունը: Նման բազմազան տերմինաբանության առկայությունը պայմանավորված է մեղիացիայի ծրագրի առաջացման տարբերություններով և նպատակներով (տե՛ս ավելին Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի բացատրական նամակը):

² Տե՛ս Головки Л.В. Новые основания освобождения от уголовной ответственности и проблемы их процессуального применения, «Государство и право», 1997, № 8, էջ 79:

որ ուշադրություն է դարձվում վնասին, որն առաջացել է կոնկրետ հանցագործության կատարմամբ և առաջնահերթ կարևորություն է տալիս գոհի փոխհատուցմանը), այնպես էլ մակրո մակարդակում (քանի որ լուծում է հանրության անվտանգության հարցը)³: Այսպիսով, վերականգնողական արդարադատության ժամանակ պատժի նպատակներն իրենց մեջ ներառում են ինչպես տուժողի, այնպես էլ հանրության մնացյալ անդամների նյութական և բարոյական վնասի վերականգնումը⁴:

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի համաձայն՝ Եվրոպայի անդամ-պետությունները ձգտում են մեղիացիան օգտագործել քրեական գործերով որպես ճկուն, մատչելի մեթոդ՝ ուղղված գոյություն ունեցող վեճի լուծմանը և այդ գործընթացին կողմերի ներգրավմանը, որը գնահատվում է որպես ավանդական քրեական դատավարության լրացում կամ այլընտրանք⁵:

Վերականգնողական արդարադատությունը՝ պատժողական արդարադատության այլընտրանքն է: Ավելին, այն կարող է հանդիսանալ սոցիալական շարժում, քանի որ նախ՝ վերականգնողական ծրագրերում մասնակցում են ոչ միայն տուժողը (գոհը) և իրավախախտողը, այլ նաև հասարակության ներկայացուցիչներ՝ կրոնական, հասարակական կազմակերպություններ և այլն, ապա՝ վերականգնողական արդարադատության ծրագրի իրականացման շրջանակներում լուծում են ստանում նաև մի շարք ոչ քրեաիրավական նպատակներ՝ հոգեբանական օգնություն, տուժողին ֆինանսական փոխհատուցում, իրավախախտողի կողմից հասարակական աշխատանքների իրականացում և այլն:

Ելնելով այն հանգամանքից, որ գոյություն ունեն վերականգնողական արդարադատության շատ ծրագրեր (միայն ԱՄՆ-ում նրանք գերազանցում են 100-ը), դրանց նպատակները կարող են տարբերվել, սակայն արմատական հիմքը մնում է մեկը՝ հասնել տուժողի և իրավախախտի միջև հաշտության և փոխհատուցել հանցագործությամբ պատճառված վնասը:

Մեղիացիայի ինստիտուտի կողմից հանցագործությունը մեկնաբանվում է, որպես կողմերի միջև անհատական հակասություն («անհատ-անհատ» փոխհարաբերակցություն), որը հանգեցնում է նրան, որ քննարկման հիմնական առարկա

³ Տե՛ս Бэйзмор Г. Переосмысление функции наказания в суде для несовершеннолетних: карательный или воспитательный подход к подростковой преступности. В сб.: Правосудие по делам несовершеннолетних. Мировая мозаика и перспективы в России / Под ред. М.Г. Флямера: В 2-х кн. М., 2000. Кн. 1, էջ 48-49:

⁴ Տե՛ս նույն տեղում, 49 էջ:

⁵ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականը:

են դառնում ոչ թե արարքը և մեղքը, այլ հստակ ճանապարհներ՝ ուղղված հանցագործությանը առաջացած անբարենպաստ հետևանքների վերացմանը⁶:

Վերականգնողական արդարադատության խիստ նեղ դրսևորում է հանդիսանում տուժողի հետ հաշտվելու ինստիտուտը, որի զարգացման միտումները հանգեցնում են դրա շրջանակների ընդլայնմանը: Որպես վերջինիս առաջին քայլ կարելի է համարել մեղիացիայի ինստիտուտի աստիճանական ներդրումը Հայաստանի Հանրապետությունում:

Մինչև մեղիացիայի ինստիտուտի՝ ՀՀ-ին համապատասխան մոդելի մշակման հարցերին անդրադառնալը հարկ ենք համարում նախ անդրադառնալ քննարկվող ինստիտուտի արդիականությանը:

Վերջին տարիներին մեղիացիայի ինստիտուտն ասիականացող արագությամբ տարծվում և զարգանում է ողջ աշխարհում: Քրեական դատավարության կողմերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, հանցագործության արդյունքում տուժած անձանց պատճառված վնասի փոխհատուցումը և քրեաիրավական հակամարտությունների հաշտեցման ձևերի կիրառումը և զարգացումը միջազգային հանրությունում ընդունված է՝ որպես արդի գաղափար: Մեղիացիայի ինստիտուտի ներդրումն առավել անհրաժեշտ է քրեաիրավական հարաբերությունների ոլորտում:

Որքան շատ է վերականգնողական արդարադատության հայեցակարգը ներթափանցում միջազգային քրեական իրավունքի սկզբունքների մեջ, այնքան ավելի օրինական հիմքեր են ստեղծվում ՀՀ քրեական օրենսդրությունում դրա կիրառման համար: Այսպես, միջազգային մարմինների կողմից ընդունվում են բազմազան իրավական ակտեր, որոնցով առաջարկվում է ներդնել մեղիացիայի ինստիտուտը, մասնավորապես՝

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2002 թվականի հուլիսի 24-ի «Վերականգնողական արդարադատության ծրագրի հիմնական սկզբունքների կիրառման հարցերը քրեական արդարադատությունում» բանաձևը՝ որը բացահայտում է վերականգնողական արդարադատության հիմնական սկզբունքները և առավել հայեցակարգային կարգավորումները, որոնք նախատեսում են հանցագործության արդյունքում առաջացած հարցերի կարգավորմանը մեծ թվով ակտիվ մասնակիցների մասնակցությունը⁷,

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականը⁸,

⁶ Տե՛ս Усе А.В. Примирение вместо наказания (как течение в правоприменительной практике) // Известия ВУЗ-ов. “Правоведение”, 1990, № 6, էջ 21:

⁷ Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2002 թվականի հուլիսի 24-ի «Վերականգնողական արդարադատության ծրագրի հիմնական սկզբունքների կիրառման հարցերը քրեական արդարադատությունում» բանաձևը:

⁸ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականը:

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1987 թվականի սեպտեմբերի 17-ի «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» N R(87) 18 հանձնարարականը⁹,

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1985 թվականի «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականը¹⁰,

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի «Դատարանների վրա աշխատանքային գերձանրաբեռնվածության կանխումը և նվազեցումը» N R(86) 12 հանձնարարականը¹¹,

Եվրոպական միության խորհրդի 2001 թվականի մարտի 15-ի «Քրեական դատավարությունում հանցահործության զոհերի տեղի մասին» հիմնարար որոշումը, որի համաձայն՝ պետությունները պարտավոր են օժանդակել մեղիացիայի ինստիտուտի ներդրմանը¹²:

Վերոհիշյալ միջազգային ակտերում նշվում է վերականգնողական արդարադատության գաղափարի՝ մասնավորապես վերջինիս նեղ դրսևորման՝ մեղիացիայի ինստիտուտի ներդրման մասին:

Մեղիացիայի ինստիտուտի ներդրումը ՀՀ-ում նախատեսված է ՀՀ Նախագահի 30.06.2012թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի Հավելված 1-ի 4.1.2.-րդ կետում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգիրքը մշակելիս անհրաժեշտ է ուսումնասիրել նաև քրեական պատասխանատվությանն այլընտրանք հանդիսացող միջոցների, մասնավորապես մեղիացիայի նախատեսման հնարավորությունը¹³, մինչդեռ ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգում չի նախատեսվում դրա ամբողջական ներդրում, այլ ընդամենը հայեցակարգի 11.3 կետում խոսվում է տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի՝ որպես մեղիացիայի մասնավոր դրսևորման խնդրահարույց հարցերի վերաբերյալ:

Հայկական ժամանակակից քրեական օրենսդրությունը փորձում է օպտիմալ ճանապարհով ներդնել մեղիացիայի ինստիտուտը գործող ավանդական պատժողական արդարադատության համակարգում: Պետք է նշել, որ մեղիացիայի ինստիտուտը կյանքի կոչելու համար ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա են օրենսդրական

⁹ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1987 թվականի սեպտեմբերի 17-ի «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» N R(87) 18 հանձնարարականը:

¹⁰ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1985 թվականի «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականը:

¹¹ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի «Դատարանների վրա աշխատանքային գերձանրաբեռնվածության կանխումը և նվազեցումը» N R(86) 12 հանձնարարականը:

¹² Տե՛ս Եվրոպական միության խորհրդի 2001 թվականի մարտի 15-ի «Քրեական դատավարությունում հանցագործության զոհերի տեղի մասին» հիմնարար որոշումը:

¹³ Տե՛ս ՀՀ Նախագահի թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. միջոցառումների ծրագրի Հավելված 1-ի 4-րդ կետը:

նախահիմքեր: ՀՀ գործող քրեական և քրեական դատավարության օրենսգրքերին հայտնի են այնպիսի հասկացություններ ինչպիսիք են՝ «հաշտություն» և «պատճառված վնասի փոխհատուցում», նախատեսված է այնպիսի կարգավորում, համաձայն որի միջդատական վարույթում դատախազը կամ քննիչը դատախազի համաձայնությամբ, դատարանը որոշակի քրեական գործերով հաշտության և փոխհատուցման պահանջների առկայության դեպքում իրավունք ունեն կարճել քրեական գործի վարույթը: Ասվածը սահմանված է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված) քրեաիրավական և համապատասխանաբար՝ կողմերի հաշտության դեպքում քրեական գործը կարճելու (ՀՀ քրեական դատավորության օրենսգրքի 37-րդ հոդված) քրեադատավարության ինստիտուտներում: Սակայն, ՀՀ քրեական օրենսդրության մեջ տեղ գտած քննարկվող ինստիտուտների նորմատիվ կարգավորումները հնարավորություն չեն ընձեռում լիարժեք խոսել մեղիացիայի մասին: Վերջինս պայմանավորված է նրանով, որ քրեական գործերով մեղիացիայի ինստիտուտի ներդրման գաղափարը Հայաստանի Հանրապետությունում չի քննարկվել ոչ տեսությունում, ոչ էլ գործնականում:

Այդ կապակցությամբ նպատակահարմար ենք համարում ուսումնասիրել մեղիացիայի ինստիտուտի էությունը և առաջարկել դրա՝ որպես հանցագործությունից առաջացած հակամարտությունների կարգավորման արդյունավետ միջոցի ներդրման մեխանիզմները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում գործող քրեական օրենսդրության առանձնահատկությունները: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի եզրակացնելու՝ որքանով է անհրաժեշտ հայկական ժամանակակից քրեական օրենսդրությունում մեղիացիայի ինստիտուտի ներդրումը: քրեաիրավական հակամարտությունների կարգավորման և տուժողի շահերի պաշտպանության նպատակով:

Վերականգնողական արդարադատության սկիզբը դրվել Կանադայում 70-ական թվականների կեսերից¹⁴: Այն դարձավ՝ սոցիալական և իրավական մտքի, ինչպես նաև ակտիվ հասարակության տարբեր ուղղությունների զարգացմանը նպաստող արդյունք: Վերականգնողական արդարադատության ձևավորման և նրա զարգացման գործընթացին նպաստեցին հետևյալ գործոնները՝ 1) սոցիալական շարժումը (պայքար բանտերում գտնվող անձանց քանակի նվազեցման և այլընտրանքային պատժատեսակների նախատեսման համար), 2) հակամարտությունների լուծման համար փորձնական ծրագրերի ներդրում (Conflict Resolution), 3) կրոնական հայեցակարգի և

¹⁴ Ст'ю Карнозова Л., Максудов Р., Флямер М. Восстановительное правосудие: Идеи и перспективы для России // Российская юстиция. 2000. N 11, էջ 42:

խաղաղապահական պրակտիկայի առկայություն 4) տեսական և գիտական ուսումնասիրություններ (սոցիալական, կրիմինոլոգիական, վիկտիմոլոգիական և այլն)¹⁵:

Եթե սոցիալական շարժման ակտիվությունը և հակամարտությունների լուծման այլընտրանքային ձևերի տարածումը վերագրվում են նախորդ դարի 20-ական թվականների կեսերին, ապա գիտական տեսությունների և հանցագործությունների դեմ առավել արդար արձագանքների և համարժեք մեթոդների՝ կրիմինոլոգիական, սոցիալ-հոգեբանական, իրավական, փիլիսոփայական և կրոնական ընտրությունը վերագրվում է ավելի վաղ շրջանին: «Restorative justice» տերմինը եվրոպական մայրցամաք ներթափանցեց վերջերս Հյուսիսային Ամերիկայից, բայց քրեական արդարադատության այլընտրանքի փիլիսոփայությունը ձևավորվում էր Եվրոպայում XX-րդ դարի 60-ական թվականներից¹⁶:

Մեդիացիան լայն իմաստով նշանակում է՝ հակամարտությունների լուծում անաչառ երրորդ կողմի օգնությամբ, որտեղ որոշումներն ընդունվում են անմիջապես մասնակիցների կողմից: Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեդիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականում տրվում է քրեական գործերի շրջանակում մեդիացիայի սահմանումը, որի համաձայն՝ դա գործընթաց է, որի շրջանակում տուժածին և իրավախախտին հնարավորություն է ընձեռվում իրենց կամային համաձայնության առկայության դեպքում անաչառ երրորդ կողմի (մեդիատորի) օգնությամբ ակտիվ մասնակցել հանցագործության արդյունքում առաջացած հակամարտության լուծման գործընթացին¹⁷:

Քանի որ մեր կողմից ուսումնասիրվող հակամարտությունների տեսակները վերաբերվում են հանրային իրավունքի շրջանակներին, կողմերը մասնակցում են խնդրի լուծման հարցին, բայց քրեական գործով վերջնական (իրավական) որոշումը կայացնում է իրավասու մարմինը: Անհրաժեշտ է նաև նշել, որ մեդիացիայի գործընթացին մասնակցող մասնակիցների շրջանակը չի սահմանափակվում միայն տուժողով և իրավախախտով՝ չի բացառվում նաև այլ անձանց մասնակցությունը մեդիացիայի գործընթացին (ծնողներին, երկու կողմերի հարազատներին, մասնագետներին, կրթական հաստատությունների

¹⁵ Տե՛ս Daly K., Immarigeon R. The past, present and future of restorative justice: some critical reflections. Contemporary Justice Review, 1998, Vol. 1, pp. 21-45. (Дали К., Имарижеон Р. Прошлое, настоящее и будущее восстановительного правосудия: некоторые критические размышления: Пер. с англ. Архив Центра «Судебно-правовая реформа»).

¹⁶ Տե՛ս Айртсен И. Деятельность в области восстановительного правосудия в Европе. Материалы к докладу // Вестник восстановительной юстиции. Вып. 3. – М., 2001. С. 5. Ярким представителем европейской критической криминологии, работы которого стали идейной и понятийной основой восстановительного правосудия, является норвежский криминолог Нильс Кристи (см. например: Кристи Н. Конфликты как собственность // www.sprc.ru; он же: Причиняя боль. Роль наказания в уголовной политике / под общ ред. Я.И. Гилянского. – СПб.: Алетейя, 2011; он же: Приемлемое количество преступлений. - СПб.: Алетейя. 2006).

¹⁷ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի N R(99) 19 «Քրեական գործերում մեդիացիայի մասին» հանձնարարականի «I սահմանման» Գ-խում:

ներկայացուցիչներին և այլն): Մեղիատորի գլխավոր առաքելությունը կայանում է հանցագործի և տուժողի հանդիպման կազմակերպումը: Նման հանդիպումները ուղղված են հանցագործության արդյունքում անձանց միջև առաջացած հակամարտությունների կարգավորմանը, խնդրի քննարկմանը և լուծմանը, ներողություն խնդրելուն, համաձայնության հասնելուն և հանցագործության արդյունքում առաջացած վնասի փոխհատուցումն ապահովելուն:

Մեղիացիայի ինստիտուտի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է առանձնացնել վերջինիս և գործող ավանդական պատժողական արդարադատության տարբերակման հետևյալ հատկանիշները. 1) կողմերի կամավոր մասնակցություն, 2) կողմերն իրենք են որոշումներ ընդունում, 3) մեղիատորի անաչառություն, 4) մեղիատորի դերը՝ կողմերի (ինչպես նաև ծրագրի այլ մասնակիցների) միջև փոխհամաձայնության կազմակերպումը, 5) գործընթացի գաղտնիություն:

Տարբերությունը կայանում է նրանում, որ փոփոխություն է կատարվում դատավարության հիմնական մասնակիցների շրջանակներում, այսպես՝ եթե գործող ավանդական քրեական դատավարությունում հիմնական դերերում հանդես են գալիս պետությունը և իրավախախտը, ապա մեղիացիայի ինստիտուտում՝ տուժողը և իրավախախտը: Այսինքն, մեղիացիայի ինստիտուտի առաջնային խնդիր է համարվում այնպիսի մթնոլորտի ապահովումը, որը կողմերին հնարավորություն կընձեռի միմյանց հետ քննարկել հանցագործության արդյունքում առաջացած հակամարտությունների լուծման ճանապարհները: Դա նշանակում է, որ մեղիացիայի իրականացման գործընթացում կողմերը առավել ակտիվ և կառուցողական, երբեմն նաև նորարական դերերով են օժտված:

Մեղիացիայի առանցքային տարբերությունը գործող ավանդական պատժողական արդարադատությունից կայանում է նրանում, որ հանցագործության արձագանքը ոչ թե իրավախախտին պատժի ենթարկելն է, այլ վերջինիս վրա հանցագործության արդյունքում պատճառված վնասը փոխհատուցելու պարտականություն դնելն է: Մեղիացիայի գործընթացում տեղի է ունենում մասնակիցների փոխկապակցվածություն (իրենց արժեքների և զգացմունքների), այլ ոչ թե դատավարական ձևական մրցակցություն, արդիականանում է անձանց դրական ունակությունները՝ փոխընթացման և դրական փոփոխության նպատակով:

Այսպես, մեղիացիայի ինստիտուտի ներդրումը հայկական քրեական օրենսդրությունում ոչ միայն կվերացնի հանցագործության արդյունքում առաջացած բացասական հետևանքները, այլ նաև կկանխի կրկին հանցագործություն կատարելու հնարավորությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գոյություն ունեն մեղիացիայի ինստիտուտի բազմազան մոդելներ և այն տարբեր երկրներում կիրառվում է տարբեր մեխանիզմներով՝

ուսումնասիրությունն առավել նպատակային դարձնելու համար պետք է քննարկել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում մեղիացիայի ինստիտուտի ներդրման ընթացքում առաջացող հետևյալ կարևոր հիմնահարցերը.

Առաջին՝ մեղիացիան լրացնելու՞ է ՀՀ ավանդական քրեական օրենսդրությունը, թե՞ հանդիսանալու է դրան այլընտրանք:

Հիշյալ հարցին պատասխանելու համար քրեական իրավունքի տեսությունը առաջարկում է լուծման երկու տարբերակ՝ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսել առանձին Գլուխ, որը կկարգավորի մեղիացիայի ինստիտուտը կամ մշակել մեղիացիայի մասին առանձին օրենք:

Քննարկվող երկու տարբերակներից ՀՀ քրեական օրենսդրության համար առավել արդյունավետ և նպատակահարմար ընտրություն կատարելու համար նախևառաջ անհրաժեշտ է նշել, որ Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի 6-րդ կետում սահմանված է, որ օրենսդրությունը պետք է խթանի մեղիացիան քրեական գործերով¹⁸: Իսկ հիշյալ հանձնարարականի բացատրական նամակի 6-րդ կետի համաձայն՝ մեղիացիայի մանրամասն նորմատիվ կարգավորումներից խուսափելու համար և հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տարբեր մոտեցումները մեղիացիային, հանձնարարականը չի առաջարկում օրենսդրությունում պարտադիր նախատեսել մեղիացիոն ծրագրեր: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ օրենսդրությունը նվազագույնը նախատեսի մեղիացիայի իրականացումը, ինչպես նաև նպաստի վերջինիս իրականացմանը¹⁹:

Կարծում ենք առավել նպատակահարմար է օգտագործել քրեական օրենսդրության առկա ներուժը և վեջինիս հնարավորությունները: Այսինքն՝ առավել հիմնավորված և պատճառաբանված է թվում մեղիացիայի ինստիտուտը դիտարկել որպես գործող ՀՀ քրեաիրավական օրենսդրության լրացում, որը կդրսևորվի առանձին մեղիացիայի մասին ՀՀ օրենքի ընդունմամբ, որը կկարգավորի մեղիացիայի հիմնարար սկզբունքները և նրա կիրառման առաձնահատկությունները: Այսինքն առաջարկում ենք ոչ թե ընտրություն կատարել քննարկվող հարցի լուծման վերը վկայակոչված տարբերակների միջև, այլ համատեղել դրանք՝ ընտրելով մեղիացիան՝ որպես ՀՀ քրեական օրենսդրության լրացում ներդնելու տարբերակը:

Առկա են նաև այլ բավական հիմնավորված կարծիքներ, որոնց համաձայն՝ անհրաժեշտ է տարբերակել մեղիացիայի ինստիտուտն ավանդական քրեական դատավարությունից: Մասնավորապես՝ Կ. Մեսարը, նշում է, որ. «Եթե վերականգնողական

¹⁸ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականը:

¹⁹ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեղիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի բացատրական նամակը:

արդարադատությունն ի վերջո ներդրվի, պետք չէ վերջինիս ընդգրկել քրեական արդարադատության համակարգ: Վտանգը կայանում է նրանում, որ վերականգնողական արդարադատության գործիքները չեն կիրառվի կամ հիմնականում կկիրառվեն դեկորատիվ նպատակներով կամ էլ վերականգնողական արդարադատության մեխանիզմները կվերածվեն պատժողականի (ինչպես պատահեց հանրային ծառայության բազմաթիվ ընթացակարգերի հետ): Անկասկած, լավագույն տարբերակը հանդիսանում է վերականգնողական արդարադատության ինքնավար համակարգի ներդրումը»²⁰:

Ինչպես նաև հիշյալ հարցի շուրջ իր կարծիքն է արտահայտում Ռ. Մակսուդովը, մասնավորապես. «Քրեական դատավարության կոշտ շրջանակները կազմում է կատարած հանցագործության և դրա որակման համադրումը: Տվյալ պարագայում այլ մոտեցումն անհնար է: Իր հերթին մեդիացիան հնարավորություն է ընձեռում հանցագործությունը դիտարկել, որպես գործընթաց, որն ունի անցյալ, ներկա և ապագա, իսկ մեղավորությունը չի ընկալվում որպես «ճշգրիտ երևույթ»: Եթե մեղադրյալն ընդունում է իր մեղքը, ապա մեդիացիան թույլ է տալիս լուծել այն հարցերը, որոնք կարևոր են հասարակության տեսանկյունից: Այլ կերպ ասած, ապագան է որ այդ գործընթացին ընձեռում է արժեքավոր շրջանակներ հանցագործությանը հակազդելու նպատակով»²¹:

Մեդիացիայի և գործող ավանդական պատժողական արդարադատության տարանջատումը ընձեռում է այնպիսի առավելություններ, ինչպիսիք են՝ կամավոր մեդիացիայի, միջնողի ընտրության իրավունք, միջնորդության ժամանակ նվազագույնս քիչ ձևական կողմեր, անմիջական ինքնուրույն մասնակցություն վերջնական որոշման ընդունման ժամանակ, ընդունված որոշման կատարման բացառապես կամավորություն:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ գտնում ենք, որ Հայաստանում մեդիացիայի ինստիտուտի **ներդրումը** պետք է իրականացվի ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով, իսկ **իրականացումը** առանձին օրենքի տեսքով: Իրականացումը նախատեսելիս պետք է հաշվի առնել այն, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան 73-րդ և 37-րդ հոդվածներն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով ունեն օրենսդրական ներուժ վերականգնողական արդարադատության նեղ դրսևորում հանդիսացող մեդիացիայի ինստիտուտը կյանքի կոչելու համար, ուստի վերջինիս ներդրումը կհանդիսանա գործող տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի այլընտրանք: Այսինքն, եթե հանցագործություն կատարած անձը կատարել է իր վրա օրենքով սահմանված կարգով դրված պարտականությունները, ապա կողմերը՝ թե՛

²⁰ Ст'у Сесар К. Карательное отношение общества: реальность и миф // Известия вузов. Правоведение. - 1998. -№ 4, էջ 171:

²¹ Ст'у Максудов Р. Восстановительное правосудие: концепция, понятия, типы программ. URL : <http://www.sprc.ru/library>

հանցագործություն կատարած անձը, թե՛ տուժողը, իրենք են ընտրում՝ օգտվել գործող ավանդական տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտից թե մեղիացիայի ինստիտուտից: Այլ կերպ ասած, հիշյալ ընտրության իրավունքը թողնված է դատավարության կողմերին:

Երկրորդ՝ արդյո՞ք մեղիացիայի ինստիտուտը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներին և սկզբունքներին:

Նշված հարցին անդրադառնալիս հարկ ենք համարում նշել, որ մեղիացիան, որպես այդպիսին, հանդիսանում է քրեական պատասխանատվությունից ազատելու յուրօրինակ հիմք, որտեղ ի տարբերություն քրեական պատասխանատվությունից ազատելու մնացած հիմքերի, քրեական դատավարության (քրեաիրավական հարաբերությունների) մասնակիցներից բացի ներգրավվում են երրորդ անձինք, ովքեր կոչված են նպաստելու կողմերի միջև հաշտության կայացմանը:

Այսպես, մի կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը վերացնում է բոլոր բացասական հետևանքները հանցագործություն կատարող անձի համար, մյուս կողմից միտված է կանխել հանցագործությունները և խթանել մեղավոր անձանց կողմից հանցագործություն կատարելուց հետո որոշակի դրական վարքագծի դրսևորումը, որը համապատասխանում է քրեական արդարադատության նպատակներին²²:

Այլ կերպ ասած, որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի բաղկացուցիչ՝ մեղիացիան համապատասխանում է ինչպես քրեական իրավունքի ընդհանուր, այնպես էլ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի սկզբունքներին, ինչպես նաև քրեական օրենսդրության խնդիրներին:

Առավել ակնհայտ է դրա և մարդասիրության սկզբունքի համապատասխանությունը: Քրեական պատասխանատվությունից ազատելը վկայում է անձի հանդեպ հանդուրժողականություն ցուցաբերելու և առանց պատժի կիրառման քրեական արդարադատության նպատակներին հնարավորինս հասնելու մասին²³: Մեղիացիայի ինստիտուտը, ներթափանցված լինելով մարդասիրական սկզբունքներով, հանդես է գալիս որպես մարդասիրական վառ դրսևորում ինչպես հանցավորի, այնպես էլ տուժողի առնչությամբ: Վերջինս դրսևորվում է նրանում, որ տուժողի շահերը (ընդ որում թե՛ զույքային, թե՛ բարոյական) մոլորում են առաջնային դիրքեր և ստանում առավելագույն բավարարում:

Պահպանվում են նաև արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Այսպես, նշված սկզբունքներն ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն. «Հանցանք կատարած

²² Ст'я Кузнецова Н.Ф. Профилактическая функция уголовного закона // Уголовное право, 1998, № I, էջ 11-20:

անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»։ Ինչպես քրեական պատասխանատվությունից ազատելու մյուս հիմքերի, այնպես էլ մեղիացիայի կիրառելիության համար որպես չափանիշներ պետք է հիմք ընդունվեն նորմում վկայակոչված հանգամանքները՝ հանցանքի ծանրությունը, դա կատարելու հանգամանքները, հանցավորի անձնավորությանը, նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար միջոցի անհրաժեշտությունը և բավարարությունը:

Այլ կերպ ասած մեղիացիայի գաղափարն ինքնին չի կարող հակասել նշված սկզբունքներին, ինչ վերաբերում է այդ ինստիտուտի կիրառելիության չափանիշներին, ապա դրանք համարելով օրենսդիր մարմնի կողմից լուծման ենթակա հարց՝ մեր կողմից սույն աշխատանքի շրջանակներում փորձ կարվի մշակել այնպիսի չափանիշներ, որոնք կբխեն այդ հանգամանքներից և օրենսդրի կողմից հաշվի առնվելու դեպքում չեն հակասի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին:

Տեսական առումով տարակարծությունների տեղիք է տվել մեղիացիայի ինստիտուտի համապատասխանությունը պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին, սակայն կարծում ենք, որ այն չի հակասում նաև վկայակոչված սկզբունքին:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության»: Նշված ձևակերպումից կարելի է ենթադրել, որ այն բացարձակ է. հանցանք կատարած յուրաքանչյուր անձ առանց որևէ բացառության պետք է պարտադիր ենթարկվի քրեաիրավական ներգործության: Այդպիսի մոտեցման դեպքում կառարկայազրվի քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտն ամբողջությամբ: Այստեղ հարկ է նշել, որ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի անբաժանելի տարր է հանսդիսանում նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, որի համաձայն. «Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում»: Այլ կերպ ասած ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված լինելու դեպքում, մեղիացիան չի հակասի նաև քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին, այնպես ինչպես չեն հակասում քրեական պատասխանատվությունից ազատելու մնացած հիմքերը:

Օրինականության սկզբունքի տեսանկյունից պետությունը հանցագործություն կատարած անձին երաշխավորում է քրեական պատասխանատվությունից ազատել, եթե

բոլոր փաստական հանգամանքները համապատասխանում են օրենքում առկա ազատման հիմքերին: Այսինքն, այստեղ ևս գործ ունենք մեղիացիայի ինստիտուտի՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի նորմատիվ ամրագրման հատկանիշի հետ:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է եզրահանգել, որ մեղիացիայի ինստիտուտը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի լրացում, դրա բաղկացուցիչ մաս, չի հակասում քրեական իրավունքի որևէ սկզբունքի և ծառայում է քրեական իրավունքի խնդիրների լուծմանը:

Երրորդ՝ հանցագործության ո՞ր տեսակների կատարման դեպքում է թույլատրելի մեղիացիայի կիրառումը:

Եվրոպական միության խորհրդի 2001 թվականի մարտի 15-ի «Քրեական դատավարությունում հանցագործության զոհերի տեղի մասին» հիմնարար որոշման 10-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է ձգտել նպաստել մեղիացիայի իրականացմանը քրեական գործերում այն հանցագործություններով, որոնց համար նպատակահարմար կհամարի այդ տեսակի միջոցառումների կիրառումը: Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է ապահովել տուժողի և իրավախախտողի միջև ցանկացած պայմանավորվածություն ձեռք բերելը մեղիացիայի գործընթացում քրեական գործերով: Ո՛չ Եվրոպան, ո՛չ էլ միջազգային հանրությունը չեն թելադրում առանձին պետություններին, թե հանցագործության որ տեսակների կատարման դեպքում է թույլատրելի մեղիացիայի իրականացումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղիացիայի ինստիտուտի ներդրումը պետք է այլընտրանք հանդիսանա գործող տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխատվությունից ազատելու ինստիտուտին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, ըստ մեզ, բացի ոչ մեծ ծանրության հանցագործություններից պետք է տարածվի նաև միջին ծանրության (բացառությամբ մահվան ելքով) հանցագործությունների վրա, ուստի նպատակահարմար է մեղիացիայի ինստիտուտի կիրառումը ևս տարածել ոչ մեծ և միջին ծանրության (բացառությամբ մահվան ելքով) հանցագործությունների վրա:

Չորրորդ՝ դատավարության կողմերից ո՞վ կարող է հանդես գալ որպես մեղիացիայի գործընթացի մասնակից:

Հաշվի առնելով այն, որ մեղիացիան հանդիսանում է տուժողի հետ հաշտվելու գործընթացի տարատեսակ և գործող ինստիտուտի այլընտրանք՝ կարծում ենք, որ հաշտության կողմեր հանդես գալու իրավունք ունեցող անձանց մասով այն պետք է նույնական լինի գործող ինստիտուտի շրջանակում հաշտության սուբյեկտների հետ: Սույն հարցի շրջանակներում կսահմանափակվենք միայն համապատասխան չափանիշներն ամփոփ ներկայացնելով: Այսպես.

- մեդիացիայի դիմելու իրավունքից կարող է օգտվել առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը (բացառությամբ մահվան էլքով հանցագործությունների),

- որպես տուժող կողմ հաշտության սուբյեկտներ են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Վերջին դեպքում տուժողի անունից հաշտություն կնքելու համար օրենսդրության համաձայն կարող է հանդես գալ համապատասխան լիազորված անձը,

- որպես հաշտության սուբյեկտներ կարող են հանդես գալ նաև անչափահաս, սահմանափակ գործունակ կամ անգործունակ տուժողները: Այս դեպքում նրանց հետ մեկտեղ հաշտության գործընթացին պետք է մասնակից դարձվեն համապատասխանաբար նրանց օրինական ներկայացուցիչները, հոգաբարձուն կամ խնամակալը:

Հինգերորդ՝ ո՞վ կարող է ՀՀ-ում լինել մեդիատոր (այլ կերպ ասած՝ ո՞վ կարող է հաշտության ընթացակարգում հանդես գալ որպես երրորդ անաչառ կողմ):

Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեդիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի բացատրական նամակի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված է. «(...) մեդիացիայի մոդելները բազմազան են: Այսպես, երբեմն, որպես մեդիատոր կարող են հանդես են գալ հատուկ վերապատրաստված քրեական արդարադատության տարբեր մարմինների աշխատակիցներ, որպես կանոն՝ սոցիալական աշխատակիցներ կամ պրոբացիայի ծառայության ներկայացուցիչներ, ինչպես նաև ոստիկաններ, դատախազության և դատարանի աշխատակիցներ: Որոշ ծրագրերում կարող են հանդես գալ մեդիատորներ (մասնագետներ կամ կամավորներ), որոնք օժտված չեն պետական իշխանության լիազորություններով»²⁴:

Ուշագրավ են նաև խնդրո առարկայի վերաբերյալ Եվրոպայի միության խորհրդի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի «Դատարանների վրա աշխատանքային գերծանրաբեռնվածության կանխումը և նվազեցումը» N R(86) 12 հանձնարարականը: Հանձնարարականը բացի նրանից, որ առաջարկում է անդամ-պետություններին դատական իշխանությանը տրամադրել անհրաժեշտ միջոցներ դատարանում գտնվող գործերի աճող քանակի արդյունավետ քննության համար, և միաժամանակ նվազեցնել այն գործերի քանակը, որոնք վերաբերելի չեն դատարավարության խնդիրներին, այլ նաև առաջարկում է ուսումնասիրել ներքոհիշյալ խնդիրներից մեկի կամ մի քանիսի դատական քաղաքականություն ներդնելու նպատակահարմարությունը.

²⁴ Տե՛ս Եվրոպայի Նախարարների Կոմիտեի 1999 թվականի սեպտեմբերի 15-ի «Քրեական գործերում մեդիացիայի մասին» N R(99) 19 հանձնարարականի բացատրական նամակը:

Ահսպես, քննարկվող հանձնարարականի 1-ին հոդվածով առաջարկվում է. «Անհրաժեշտության դեպքում նպաստել կողմերի հաշտությանը, ինչպես արտադատարանական այնպես էլ մինչև կամ դատավարության ընթացքում: Այս նպատակով, հնարավոր է ուսումնասիրել հետևյալ միջոցները.

1) գործող համապատասխան խթանների հետ միասին, վեճերի լուծման համար նախատեսել հաշտության ընթացակարգեր, մինչև դատավարությունը կամ արտադատարանական այլ միջոցներ,

2) դատավորների վրա, որպես հիմնական խնդիր դնել, ինչպես կողմերի հաշտության հասնելու, այպես էլ համապատասխան հարցերի շուրջ հաշտության համաձայնագիր կայացնելուն, ինչպես մինչև դատավարության սկիզբը, այպես էլ դատավարության փուլերում,

3) փաստաբանների բարոյական պարտականություն համարել կամ իրավասու մարմիններին առաջարկել նման սկզբունք ճանաչել այն, որ փաստաբանները պարտավոր են հասնել կողմերի հաշտությանն ինչպես մինչև դատավարության սկիզբը, այնպես էլ դատավարության յուրաքանչյուր փուլում»:

Մեր կարծիքով հիշյալ հարցը համարվում է մեդիացիայի ինստիտուտի ներդրման համար առավել հայեցակարգային և դժվարին հարցերից մեկը: Քննարկվող հարցն առավել արդյունավետ ուսումնասիրելու համար նպատակահարմար է նախ անդրադառնալ խնդրո առարկայի վերաբերյալ:

Այսպես, Անգլիայում քրեաիրավական մեդիացիան դիտվում է «որպես ընթացակարգ, որի միջոցով անաչառ երրորդ կողմի օգնությամբ կողմերը կարողանում են հաղթահարել հակամարտությունների արդյունքում առաջացած անհամաձայնությունները: Պետք է նշել, որ հենց հակամարտության մասնակիցները իրենք են որոշում կայացնում հաշտեցման պայմանների մասին, այլ ոչ թե մեդիատորը (երրորդ կողմը)»²⁵: 1984թ. Մեծ Բրիտանիայում ստեղծվեց հասարակական կազմակերպություն՝ «Մեդիացիան Մեծ Բրիտանիայիայում» (Mediation U.K.): Վերջինիս հիմնական գործառույթը կայանում է հետևյալում՝ համակարգել քաղաքացիական և քրեական գործերով մեդիացիայի բազմազան շրջանային պրակտիկան:

Ֆրանսիայի քրեական և քրեական դատավարության իրավունքներում մեդիացիայի հասկացությունը սահմանված է հետևյալ ձևով. «... իրականացվում է երրորդ կողմի օգնությամբ ազատ բանակացությունների ընթացակարգով կողմերի միջև առաջացած հակամարտությունների լուծման նպատակով»²⁶:

Բելգիայում և Նիդեռլանդներում այդ ինստիտուտն անվանվում է գործարքի (տրանսակցիա) ինստիտուտ (համաձայնություն, որն ուղեկցվում է փոխադարձ

²⁵ Տե՛ս Community and neighbour mediation / Ed.M. Liebmann. London-Sidney, 1998. էջ 295:

²⁶ Տե՛ս Joumee sur la mediation et les alternatives aux poursuites // Revue de science criminelle et de droit penal compare. 1991. № 4. էջ 840:

համաձայնությամբ), որը վաղուց դարձել է քրեական արդարադատության անբաժանելի մասը:

ԳԴՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ պարագրաֆը սահմանում է, որ քրեական զանցանքների գործերով դատավորի համաձայնության դեպքում դատախազն իրավունք ունի, հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց (...): Ընդհանուր առմամբ Գերմանիայի իրավաբանները նշում են, որ «... հակամարտությունները լուծող այլընտրանքային ձևերը դիտվում են որպես հրատապ անհրաժեշտություն»²⁷:

Ավստրիայում ստեղծվել է հատուկ ինստիտուտ, որի համաձայն՝ դատախազը իրավունք ունի քրեական հետապնդում իրականացնելու փոխարեն քրեական գործը փոխանցել պրոբացիոն ծառայություններին: Այդ ծառայության մասնագետները իրականացնում են գործողություններ, որոնք ուղղված են՝ հանցագործության արդյունքում առաջացած հակամարտությունների վերացմանը, կողմերի հաշտությանը, տուժողին պատճառված վնասի փոխհատուցմանը և ավանդական քրեական հետապնդումից խուսափելը²⁸:

1965թ. Լեհաստանում ստեղծվեցին արտադատարանական ինստիտուտներ (հասարակական հաշտեցման հանձնաժողովներ) հաշտեցման հարցեր կարգավորելու նպատակով:

ԱՊՀ անդամ պետություններից քրեական գործերով մեղիացիայի ինստիտուտը ներդրվել է Ղազախստանի և Մոլդովայի Հանրապետություններում: Ավելին, Ա. Հարությունյանը նշում է, որ Մոլդովայի և Ղազախստանի օրենսդիր մարմինները առաջընթաց են գրանցել մեղիացիայի ոլորտում, քանի որ հիշյալ պետությունների օրենսդրությունները քրեաիրավական հակամարտությունների լուծման հարցում հաշվի են առնում միջազգային չափորոշիչները, նախատեսում են նորմեր, որոնք հանգամանորեն կարգավորում են մեղիացիայի ընթացակարգի իրականացումը, մեղիատորի իրավական կարգավիճակը, ինչպես նաև քրեական գործերում մեղիացիայի կիրառման իրավական հետևանքները²⁹:

28.01.2011թ. Ղազախստանի Հանրապետությունում ընդունվեց «Մեղիացիայի մասին» ՂՀ օրենքը, որի 2-րդ հոդվածում սահմանված է, որ մեղիատորը՝ ֆիզիկական անհատ անձ է, որը մասնագիտական և ոչ մասնագիտական հիմունքների հիման վրա մեղիացիա է իրականացնում կողմերի համաձայնության պայմանով սույն Օրենքի

²⁷ St'u Blankenburg Э. Юристы и правовые инновации в Германии и США (сравнительный анализ) // Государство и право. 1997, № 5, էջ 105:

²⁸ St'u Winter R. Le projet de la regulation des conflits en Autriche // Nouvelles tendances dans le droit penal des mineurs. Max Planck-Institut. Freiburg, 1990. էջ 139:

²⁹ St'u Арутюнян А.А. Медиация в уголовном процессе. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2012, էջ 16:

պահանջներին համապատասխան³⁰: Ինչպես նաև մեդիատորի նույնարժանիակ սահմանումը տրված է ՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 88¹-րդ հոդվածում, ՂՀ օրենսդիր մարմինը վերջինիս հասկացությունը սահմանել է ՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ Գլխում՝ «Քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք»:

Պետք է նշել նաև, որ մեդիացիայի ինստիտուտի ներդրման հարցում նմանատիպ մոտեցում է ցուցաբերել նաև Մոլդովայի Հանրապետությունը: Այսպես, 14.06.2007թ. «Մեդիացիայի մասին» ՄՀ օրենքի 6-րդ հոդվածում սահմանված է մեդիատորի կարգավիճակը, որի համաձայն՝ մեդիատորը հանդիսանում է մեդիացիայի ընթացակարգում կողմերին օգնություն ցուցաբերող, կողմերի միջև առաջացած հակամարտությունների լուծման նպատակով: Ուշագրավ է նույն հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ այն դեպքերում երբ որպես մեդիատոր է ընտրվում փաստաբանը, ապա վերջինս իրավունք չունի մեդիացիայի ընթացակարգում օգնություն ցուցաբերել կամ ներկայացնել կողմերից որևիցե մեկի շահերը նույն հակամարտությունների շրջանակներում³¹:

Այսպես, արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա կարող ենք փաստել, որ ընդհանուր առմամբ գոյություն ունի խնդրի լուծման երկու ճանապարհ՝ կա՛մ մեդիացիան իրականացվում է քրեական դատավարության շրջանակներում (օրինակ՝ դատարանի կամ դատախազի կողմից)³², կա՛մ քրեական դատավարության շրջանակներից դուրս երրորդ անձի կողմից³³:

Մինչև այն հարցին պատասխանելը, թե ով կարող է ՀՀ-ում քրեական գործերով լինել մեդիատոր, նպատակահարմար է ներկայացնել որոշ ՀՀ օրենսդրական կարգավորումներ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ **դատարանը, դատախազը**, ինչպես նաև **դատախազի համաձայնությամբ՝ քննիչը** կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: Այսինքն, տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական գործի վարույթը կարող է կարճվել հետևյալ իրավասու մարմինների կողմից.

դատարանի,

դատախազի,

դատախազի համաձայնությամբ քննիչի:

³⁰ St'u Закон Республики Казахстан «О медиации», от 28.01.2011г. № 401-IV (с изменениями и дополнениями по состоянию на 03.07.2013 г.):

³¹ St'u Закон Республики Молдова «О медиации», от 14.06.2007г. № 134-XVI.

³² St'u Ambroise-Casterot C., Fricero N., Henry L.-C., Jaco P. Glossaire des procedures. Paris, 2007. էջ 183:

³³ St'u Darbyshire P. English legal system. London, 2007. էջ 165:

Այսպես, տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական գործի վարույթը կարող է կարճվել և հետևաբար հանցագործություն կատարած անձը կարող է քրեական պատասխանատվությունից ազատվել քրեական դատավարության շրջանակներում վերոհիշյալ սուբյեկտների կողմից համապատասխան որոշում կայացնելու արդյունքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղիացիայի ինստիտուտի ներդրման արդյունքում լրացվելու է ՀՀ գործող տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներ) և հանդիսանալու է վերջինիս այլընտրանք, ի տարբերություն վերջինիս մեղիացիայի ընթացակարգը իրականացվելու է արտադատարանական կարգով, միանգամայն բացառում ենք վերոհիշյալ իրավասու մարմինների վրա մեղիացիայի իրականացման առաքելությունը դնելը, քանի որ նրանց ՀՀ օրենսդրությամբ վերապահված է հաշտության (իսկ մեղիացիայի ներդրման արդյունքում՝ նաև այդ կարգով կայացված հաշտության) հիմքով անձին ըստ էության քրեական պատասխանատվությունից ազատելու լիազորություն: Այլ կերպ ասած, նշված մարմիններին նաև մեղիատորի լիազորություններով օժտելը կհակասի քրեական դատավարությունում ֆունկցիոնալ տարանջատման սկզբունքին և կհանգեցնի չարաշահումների:

Պետք է նաև արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսդրության շրջանակներում մինչ օրս հաշտության ինստիտուտը չի կարգավորել վերջինիս ընթացակարգերի իրականացումը, կողմերի միջև համաձայնության հասնելու հսկողությունը, ինչպես նաև հաշտության որոշման սոցիալ-իրավական հետևանքները:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսդրության առանձնահատկությունները՝ կարծում ենք նպատակահարմար է, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով որպես մեղիատոր՝ երրորդ անաչառ կողմ, հանդիսանա «Քրեական գործերով մեղիացիայի հանձնաժողովը»³⁴:

Ամփոփելով վերոհիշյալը նպատակահարմար է նշել, որ քրեական գործերով մեղիացիայի ներդրման և վերջինիս արդյունավետ կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կունենա նոր արդյունավետ քրեական քաղաքականություն, որը կդրսևորվի ոչ միայն պատժողական արդարադատության, այլ նաև վերականգնողական արդարադատության մեջ, որի գաղափարն է վերականգնել (վերածնել) բնակչության

³⁴ «Քրեական գործերով մեղիացիայի հանձնաժողովը» հաշտության ընթացակարգում հանդես է գալու որպես, երրորդ անաչառ կողմ, հանցագործության արդյունքում կողմերի միջև առաջացած հակամարտությունների կարգավորման և տուժողին պատճառված վնասի փոխհատուցման համար: Հիշյալ հանձնաժողովի (մեղիատոր) նպատակը, իրավունքները և պարտականությունները, հաշտության մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև մեղիացիայի իրականացման կարգը և այլ իրավական հարցեր պետք կարգավորվեն առանձին՝ «Քրեական գործերով մեղիացիայի մասին» ՀՀ օրենքով, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսդրության առանձնահատկությունները: Ինչպես նաև նպատակահարմար է մեղիատորի օրենսդրական հասկացությունը սահմանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

սոցիալական և բարոյական հատկանիշները, ինչպես նաև օրենքի գերակայության ամրապնդումը:

Մեղիացիայի գաղափարի ներդրման մասին առավել ամփոփիչ մոտեցում է ցուցաբերում քրեական գործերով մեղիացիայի գիտության Փորձագիտական կոմիտեի փորձագետ Խելյե Ջակը, որի կարծիքով. «Մեղիացիան պետք է ավելացնի նոր որակներ, այլ ոչ թե վերջ դնի իրավունքի ոլորտում նվաճած քաղաքակրթությանը: Մեղիացիան չպետք է հյուսվի իրավական ֆորմալիզմի խճճված ցանցի մեջ: Սակայն անհրաժեշտ է, որ այն ենթարկվի մարդու իրավունքների այնպիսի պահանջներին, որոնք սահմանված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով»³⁵:

Հիմք ընդունելով վերոհիշյալը, առաջարկում ենք կատարել հետևյալ օրենսդրական լրացումները և փոփոխությունները.

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 73. «Քրեական պատասխանատվությունից ազատելը հաշտվելու դեպքում»

Ոչ մեծ ծանրության, ինչպես նաև առաջին անգամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ, այդ թվում մեղիացիայի կարգով, և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

Առաջարկում ենք մեղիացիայի ինստիտուտի ներդրումը ՀՀ քրեական օրենսդրության շրջանակներում, մասնավորապես՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի շրջանակներում (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված), որով ավանդական հաշտության այլընտրանք կարող է հանդիսանալ մեղիացիայի կարգով հաշտությունը: Դրա իրականացումը պատկերացնում ենք առաձին օրենքի տեսքով, հետևաբար անհրաժեշտ ենք համարում, որ համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված լինի մեղիատորի հասկացությունը, հաշվի առնելով մեղիատորի առանձնահատկությունը, և մեր կողմից Հայաստանի Հանրապետության համար առաջարկված նոր մեղիատորի անունից հանդես եկող «մեղիատորի հանձնաժողովի» գաղափարը:

Առաջարկում ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Քրեական դատավարության մասնակցող անձինք» վերտառությամբ 10-րդ Գլխում, նախատեսել նոր խմբագրությամբ 87¹-րդ հոդված, որով կսահմանվի մեղիատորի հասկացությունը.

«Հոդված 87¹. Մեղիատորը

1. Մեղիատոր է հանդիսանում մեղիատորի հանձնաժողովը, որը քրեական գործով կողմերին ներգրավում է մեղիացիայի իրականացման համար օրենքի պահանջներին համապատասխան:

2. Մեղիատորը իրավունք ունի՝

1) ծանոթանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տրամադրված քրեական գործի նյութերին.

2) ծանոթանալ մեղիացիայի մասնակիցների կողմից տրամադրված նյութերին.

3) հանդիպել քրեական դատավարության մասնակիցների հետ, որոնք հանդիսանում են մեղիացիայի կողմեր:

3. Մեղիատորը պարտավոր է օրենքով սահմանված կարգով իրականացնել իր վրա դրված պարտականությունները:

4. Մեղիատորը ունի նաև օրենքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ»: